

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նորին Ս. Օծութին Ազգընտիր Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոս Պալենան ծնած է Ռոտտսթո, գեղածիժաղ նաւահանգիստ քաղաք մը Սեւ ծովի վրայ, 1907ին, բարի, հաւատաւոր ու աշխատասէր ծնողքներէ, աւագանի անունով Կարապետ: Հայրը արհեստաւոր, իսկ մայրը ուսուցչուհի: Ուսուցչուհի մայրը կարեւոր դեր մը ունեցած է պատանի Կարապետի կեանքին մէջ անոր նախադասական եւ ապա դաստիարակութեան գործին մէջ, ուսումնատեւելիք իր տղուն ջամբելով ազգային-եկեղեցական սրբութիւններու հանդէպ սէր, գուրգուրանք եւ պատկառանք:

Պատանի Կարապետին ծնողքը Ռոտտսթոյէն գաղթելով Ռումանիա կը հաստատուին եւ իրենց գուրգուրանքին առարկայ կը դարձնեն իրենց զաւակը դրկելով զայն Պուրբէշի Ազգ. Քէսինեան Վարժարանը: Հոն իր նախնական ուսումը ստանալէ ետք կը հետեւի Պուրբէշի Գերմանական Լիսէի դասընթացքներուն եւ հուսկ ապա Կալարտէ տեղւոյն համալսարանին փիլիսոփայական եւ աստուածաբանական ճիւղերը, ստանալով Պսակաւորի տիտղոսը:

Բարեհամբոյր եւ հեզ իր քնաւորութեան, ինչպէս նաեւ իր բազմակողմանի կարողութիւններուն եւ ծիրքերուն համար Պուրբէշի Ազգ. Վարժարանին մէջ կը նշանակուի ուսուցիչ եւ քարտուղար գործին: 1942 մեծ ձեռնհասութեամբ եւ խղճմտանքով կը կատարէ: Նոյն տարին, պատերազմի արհաւիրքներուն կ'անցնի Աթէնք: Ռումանահայոց Առաջնորդ Գեր. Տ. Յունիկ Արքեպս. Զօհրապեան վախճանած ըլլալով, իր մէջ հոգեւորական դառնալու փափաքը կ'արժարծի եւ ընթացք տալով Ռումանահայոց Ազգ. Իշխանութեան դիմումին, կը հաւանի վարդապետական ձեռնադրութիւն ընդունիլ: 1943ին, Յունահայոց Առաջնորդ Գեր. Տ. Կարապետ Արքեպս. Մազլումանի ձեռամբ կը ստանայ վարդապետական աստիճան եւ կը նշանակուի Պուրբէշի Առաջնորդական Փոխանորդ:

Համալսարանաւարտ, բազմակողմանիօրէն պատրաստուած, խոստմնալից երիտասարդ եկեղեցականին առջեւ կը բացուի նոր եւ բեղուն ասպարէզ մը: Իր նոր պաշտօնին մէջ եւս կը շարունակէ աշխատիլ այն եռանդով որ նախապէս փարած էր իր գործին: Տարիներ շարունակ վարած է կրթական, լրագրական, հասարակական եւ գրական գործունէութիւն մը, Ռումանահայ մատաղ սերունդի հոգիին մէջ վառ պահելով Մայրենի եկեղեցիին եւ մայրենի լեզուին սէրը, Հայրենիքին սէրն ու կարօտը: Նախ քան կուսակրօն եկեղեցական մը ըլլալը, արդէն հասուն գրող մըն էր ան, օժտուած գրելու տաղանդով, ունենալով գրական ճաշակ, հիւթեղ, պատկերաւոր եւ հարուստ լեզու: Իր աշխատութիւններէն օրինակ մը տուած ըլլալու համար յիշենք «Երիմեան Հայրիկ որպէս դաստիարակ», «Հայերը Ֆրանց Վէրթէլի վէպին մէջ» եւ այլն:

Իբրեւ Ռումանահայոց Առաջնորդ, 1945ին կը հրաւիրուի Ս. Էջմիածին, մասնակցելու համար հայրապետական ընտրութեան եւ հոն կը ստանայ Ծայրագոնութեան աստիճան: 1951ին Ն. Ս. Օ. Գէորգ Զ. Կաթողիկոսի ձեռամբ կը ձեռնադրուի Եպիսկոպոս, եւ մասնաւոր կարգադրութեամբ եւ կոնդակով կը նշանակուի Առաջնորդ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Հայոց:

Ծանրախոհ, շրջանկատ, հեզ եւ իր շուրջ պատկառանք ազդող եկեղեցական մը եղած է ան կրօնական ասպարէզ ընդգրկելէն ետք: Բացի իր մայրենի լեզուէն, հաւասարապէս կը տիրէ Ռումաներէն, Ֆրանսերէն, Գերմաներէն լեզուներուն. գիտէ նաեւ Ռուսերէն ու Պուլկարերէն: Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալէ ետք, իրրեւ Պատուիրակ վերստին Հայրենիք եւ Ս. Էջմիածին ճամբորդելով գրի առած է իր հայրենական յուշերը եւ ի լոյս ընծայած է գողտրիկ եւ սիրուն գրքոյկ մը լի թրթռուն զգացումներով եւ հայրենական սիրով «Հայրենի Արեւին Տակ»: